


ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ

Ե. ԹՈՐՈՏՅԱՆ

Նամակ կամ որ եւ է  
զրու թիւն պետք է ուղղել առ  
Տնօրին ԱՐՇԱՆՈՅՍ քաղաքի  
ԳԱՀԻՐԷ (Կահիրէ)



ՔԱՆԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե.Թ.ՊՏՈՒՆ ԶԱՐԱՐ	
Տարեկան ողջ դահլիճ	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Տրամիք	20
Վեցամսեայ »	12

E. TOROSSIAN

Direc.-propr. du journal arménien

ARCHAEOLOGIE

LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No. 209

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՆԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
Եւ թղթատարի ծախքը  
հոկտեմբերական վրայ է:

հոկտեմբերական ուղղում  
գրուածիս ևս չ'են տուտ

Ա.Չ.Ս.ՐԱՐՈՒԹԻՒՆԻ  
Կանխիկ վճարելի են

### ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՄՍԱՍԲՈՒԹԻՒՆԸ

Չինաստանէն եկած շարքերը, քանի մը օրերէ ի վեր, լուրջ ապստամբութիւն մը կը ծանուցանեն:

Անգլիական այժմ թրանսպալի գործերով թմբած է. Գերմանիան ճամարալանտի մէջ զբաղած և ձրանպան աչքերը ուրիշ կողմեր յառած է. վերջապէս Եւրոպան ուրիշ հողերով պաշարուած, այս ապստամբութեան արժանաւոր ուշադրութիւն մը չը դարձուց:

Եւ ահաւասիկ՝ Փէրին յանկարծ կըստ պառնայ աճրող հիւսիսային Չինաստանի մէջ եւրոպացիներու կեանքը վտանգի մէջ գնելու:

Եւրոպացիներու նոր գրաւած նահանգներն և ա՛յն տեղերը, ուր երկաթուղիներ և եւրոպացիներու բազմութիւն կար, ձեռն ժամանակ այլ և այլ խռովութիւններ անդի ունեցան, մասնաւորապէս Շան-Սիւնի մէջ, զոր Գերմանացիք գրաւեցին, ինչպէս նաև Բեյիլիի մէջ և այլ տեղեր, ուր օտարականներու ահագին բազմութիւն մը կար:

Այս ամեն խառնաշփոթութիւններն կը վերագրեն Պոստոններու գաղտնի և ահարկու ընկերութեան, որ միմիայն Բեյիլիի մէջ 200,000 ի չափ համախոհներ ունի:

Արդ՝ Չինական կայսրութեան քաղաքականութեան մէջ, գաղտնի ընկերութեանց գերը ամեն ոք գիտէ:

Ամենքն ալ պատրաստուած են յեղափոխական գործին:

Ժողովուրդը՝ պաշտօնատարներու և վարչութեանց դէմ գործածելու ո՛ր և է միջոց չ'ունենալով, «Ապստամբութիւնը նուիրական իրաւունք» մը համարած է, որ թերևս անփոփոխ կայսրութեան մը ամեն նաանփոփոխ յատկանիշներէն մին եղած ըլլալ այս:

Եւրոպայի մէջ զինեալ ապստամբութիւնը վերջին դիմում մը նկատուած է. ընդհանրապէս Չինաստանի մէջ, ժողովրդեան միակ միջոցն է, իրենց պահանջները լսելի ընել տալու համար. միջոց մը՝ որ դարերու պատմութիւնը և փորձառութիւնները ճանչցած և նուիրագործած են:

Ապստամբութիւնը յաշտ Չինացաց անհրաժեշտ պէտք մ'է. պահանջման բնական եղանակ մ'է. ներկայացման գրութիւն

մ'է. վերջապէս իրաւունք մ'է. արդ՝ յաճախ այս իրաւունքը գաղտնի ընկերութեանց կողմէ կը գործադրուի:

Թայ-Փինկուի մէջ ծագում առած գաղտնի ընկերութեան մը ապստամբութիւնն էր, որ քիչ մնաց Չինաստանի բաժանումը պիտի վճռէր: Այս ժամանակէն ի վեր, գրեթէ քառասունի չափ նմանօրինակ յուզումներ անդի ունեցան, սակայն ընդարձակ ծաւալ գտած չ'ըլլալուն համար նուազ վտանգաւոր եղան:

Այսպէս է որ քանի մը նահանգներու ընկերները նուազեցան և հիւսիսային արևմտեան Չինացի մահապաշտները իրմբովին ուրի կ'լան:

Քանի մը ընկերութիւններ, ինչպէս «Կրանս քրիստ» լաւ ծանօթ են, որովհետեւ աւելի համախոհներ ունին Հնդկա-Չինի եւրոպական գաղթականութեանց մէջ և քան տարիէ ի վեր, թէ՛ ազդեցութեամբ և թէ՛ կարեւորութեամբ մեծցած են: Հիւսիսային Չինաստանի մէջ մասնաւորապէս Պոստոններու ընկերութիւնն է՝ որ շատ զօրաւոր է:

Անցեալ հոկտեմբեր ամսէն ի վեր, Պոստոնները Չինացի պաշտօնատարներու քով աւելի պաշտպանութիւն քան դիմագրութիւն գտնելով, օտարականները բնաջինջ ընելու խօստումը առած էին. և աստ անը՝ իրենց դէմ զրկուած կանոնաւոր զինուորներուն վրայ պղտիկ և դիւրին յաջողութիւններ կը տանէին. այսու հանդերձ իրենց անպատիւ մնալը Մայր-Կայսրուհւոյն կուտակեցութեան կողմէ անպահանջ էր, այսպէսով իրենց թիւրահազին համեմատութեամբ կ'ուշեցնար:

«Խաղաղութեան և հայրենասիրութեան բառերը հարուածներ տուց» կը կոչէին զիրար: Հետեւաբար եւրոպացիները Պոստոնն անուանեցին Անգլիերէն լեզուով, կամ Պոստոն Գաղիերէն լեզուաւ: Ասոնց պետերը կը պարծենան թէ՛ մոգական զօրութիւն ունին որ զիրենք թնդանօթի ունեւբերուն և գնդակներուն առջև վտանգէ զերծ կը պահէ:

Օտարականներու դէմ գրգռուած զինեալ Պոստոնները Փէրինի բոլորտիքը երևան եկան և անկէ ութը միջոց հետո մայրաքաղաքը միացնող երկաթուղւոյ վրիժը գրաւեցին. յետոյ քաղաքը և կայսրանը այրեցին:

Շատ մը Պէլճիգացիներ բլուրի մը վրայ և շատ մը միափոխարներ Փո-թինկ-ձուլի մէջ ապստամբած են այժմ:

Յրանապիներէ և Գերմանացիներէ բաղկացեալ պղտիկ զինեալ խումբ մը, Թիւն-Չինէն մեկնեցան Պոստոններէն պաշարուած Պէլճիգացիները ազատելու համար: Այս խմբին մեկնումը դիւրացնելու նպատակաւ Փոստոններէն արտօնութիւն ստանալու համար, Յրանապի հիւպատոսին ազգու գիւմումին հարկ եղած է:

Անգլիական քանի մը թերթեր կը յայտարարեն թէ՛ Բորթ-Արթիւրէն 20,000 Ռուս զինուոր հիւսիսային Չինաստանը պիտի գրաւեն: Շանկայի Ռուսական գետապար Չինու ամեն նաւահանգիստներուն մէջ գտնուած պատերազմական տրամադրելի նաւերուն հրաման զրկած է, որ անմիջապէս Թա-Գու երթան:

ՀԵՐՄԱՆ

### ԳՐԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Գիտութիւնը, որուն չափը նակատակ կը համեմատուի գալստի գաւառներուն չափին հետ, անհուն, անընթացելի և անհասանելի կերպով մեծ է, ընդարձակ է և անվերջ. ու եթէ գալստ իրապէս կամ գրապէս, բնեք նւթապէս, վարմանցնել կարելի լինէր, անոր չափին ու բանակին, չ'ընէր որակին, վրայ գաղտնիքը և հասկցողութիւնը կազմելու համար, պէտք է երեւակայել ովկիանոսի իւրաքանչիւր մասնաչափ շուրջ նոր ովկիանոսներ գարցած, աստղեր աշխարհներու վերածուած և աւազներ լեռներու. և այս անչափելի, անեղ ու անբաղդատելի մեծութիւնը դեռ փոքր իսկ է գիտութեան հանդէպ բազմապատկուած, չափուելու և կշռուելու. այն գիտութեան հետ՝ որ կայ ու պիտի ըլլայ:

Ու այս գիտութիւնը ունի իւր բազմազգի շառաւիղներն ու տեսակները. նոյնչափ շատ, նոյնչափ խոր. նոյնչափ մեծ՝ որչափ գիտութեան մեծութիւնը: Իսկ այսօր գիտնալ հարկ է մեթոսն որ ագիտութիւնը գիտութեանէ մեծ է, շատ է և ստորածեալ:

Այժմ, երբ կ'ուզենք գիտութեան վրայ խօսել, զրկու ծառել, շատ հեշտ է իմանալ թէ՛ չէ՛ կարելի խօսիլ շատ արձակ ու ընդարձակ. հետեւաբար մտաբերելի է թէ, սոյն սեղմ էջերու մէջ գիտութեան մէկ ճիւղին վրայ եւեթ կարճ մի տեղեկութիւն տալ կարելի է, ինչ որ իսկապէս մեր նպատակն է, և ճիւղն ալ գիտութեան այն մասն է. որ կը կոչուի ԳԻՄԱԿԻՆՏՈՒԹԻՒՆ:

Գիտութիւնն իւր բազում օգտակար ճիւղերուն մէջ փափաքեցաւ յաւելուլ և Մարգարեականը, այսինքն ուղեց գոռչակի, իմանալ մարգարէն ինչ ըլլալը, չէ՛ թէ անոր խօսքէն, այլ դիմեցին. ու գիտութեան այս մասն է ահա, որ Գիտագիտութիւն կը կոչուի և որուն վրայ կարճ, խիստ կարճ երկու խօսք պիտի բնեք հանդերձ

վէկ գործնական օրինակաւ կրկնենք, լաւ եւս նասկցնելու նախար:

Գիւնագիտութիւնն է արուեստ մը, որ մարդու գէշընքն բարոյական գոչակել կը սովորեցնէ. եւ այսօր աննշան հակընդդիմութեանը գիտական աշխարհէն ընդունուած, վաւերացած դասաւանդութեամբ կ'ուսուցուի շատ լուսաւորեալ ազգերու բազմաթիւ վարժարաններու անթիւ ուսանողներուն. եւ անով մարդկութիւնը քայլ մ'այ կ'աննէ օգտուելու, ճանչնալով վայրկենապէս այն մարդը, որուն հետ առաջին անգամ կը տեսնուի թէպէտ, բայց իսկոյն՝ շնորհիւ գիտագիտութեան գեղեցիկ, երջանիկ արուեստին, այդ մարդուն. որուն ո՛չ ծագումը, ո՛չ ով լինելը գիտէ, իսկոյն կը գոչակէ բարոյականը, չարոյականը, լաւը, վատը եւ կարճ խօսքով, անբողջ որպիսութիւնը եւ կուտայ իւր վճիռն. որ վիճելի չ'է:

Բանասերներ գուցէ նկատած լինին որ մեր մէջ, հիներն ալ գիտագիտութեան եւ կազմակերպութեան վրայ զազափար ունէին եւ զայնս հաստատող հրատարակութիւններ մինչեւ մեր օրերը մնացած են գեաւորաց կարգէն է եւ ձեռնահմայութիւնը. սրոյ կիրառման միջոցներն են մարդու ափին մէջի գծերը, բայց այս հմայութիւնք անմշակ մնալով եւ չ'ձուլուելով գիտութեան հետ, լոկ փորձառութեանը սահմանուած մնացին գրեթէ անպատշաճ անօգուտ. իսկ բուն գիտագիտութիւնը, որ թէ գիտութեան եւ թէ փորձառութեան միութիւնն է, լաւ արդիւնք տուաւ եւ կուտայ. մասնաւոր վերջերս, երեւելի գիտնական Պ. Կալ մասնաւոր հատորով մը գիտագիտութիւնը կասարեալ հոչակեց եւ ոչ ոք հաւատարմակցաւ անոր գէտ խօսք մ'իսկ արտասանել. դժուար չ'էր մեզ աւելի առաջ երթալ հաւտողի ու համոզուի փաստեր բերելու, բայց որովհետեւ որ եւ իցէ կերպով, առանց դասական ընելու բուն խնդիրը. սոյն անձուկ սողելով չ'ենք կարող մեր ընթերցողները գիտագէտներ ընել մէկ անպատէն, ուստի մեր յիշած ձրանասցի երեւելի գիտնական Պ. Կալի հետեւելով մի օրինակ յառաջ բերենք իբր գործնական փորձ եւ իբր միջոց աւելի դիւրին կերպով գաղափար կազմելու գիտագիտութեան վրայ:

Առնենք գէտ մը, իբր տիպար կամ կազապար ու ընենք անոր իւրաքանչիւր մասին վրայ. քթին, բերնին, աչքին, շրթունքին, ձակատին, ծնօտին, երեսին եւլն. եւլն. մեր գուչակութիւնները՝ եւ գուրս հանենք այդ տիպարի՝ բուն ներքին մարդը այսինքն անոր բարոյականը:

Մեր քննութեան սակ գրած տիպար գէտը նշանակենք այսպէս:

- Գլուխ. ձուածեւ եւ սուր ու լերկ.
- Ճակատ. միջակ եւ կարկառային.
- Քիթ. վայրահակ համեմատեալ ու սրածայր.
- Այտ. ճափակ եւ չոր.
- Ծնօտ. փոքր եւ անկիւնաւոր.
- Աչք. միջակ, աղօտ, աղկաճար եւ ցաւքսած.
- Բերան. մեծ եւ լայնանիւստ.
- Շրթունք. պրկեալ եւ գունաթափ.
- Մորուք. ցանցաւ ղացառային ու անմշակ.

Այժմ մեր առջեւ ունինք մարդկային գէտ մը մը, որ երեւակայական չ'է. այլ իսկապէս ապրող, ուսող, խնդ եւ կենդանի. որն որ մեր մէջ կը գտնուի այսօր առանց յայտնելու նորա անունը. մեզ առաջնորդ ընելով կալ երեւելի գիտնականը, յայտարարենք վերեւ ստորագրեալ գէտը կրող մարդուն ներքին յատկութիւնները որք հաւաքաբար եւ անվրէպ դարս կը բերեն:

Օտարախոյութիւն. ազիտութիւն. կոյր հետեւողութիւն. դատելու եւ տրտմանալու անկարողութիւն. խաբուելու արտադրութիւն, անխորհուրդ փառասիրութիւն. գերբանաւանութիւն. սխալեմարտի հաւնողման. ատելութիւն թուլախոյութիւն. իմի բան անընդունակութիւն աւելն մեծ ու վսեմ գործերու եւ հմայականութիւն. իսկ յարմարութիւն կոչա աշխատանքի եւ կենդանական կենաց անխուսափելի պայմանաւ:

Իսկ թէ ո՛րն է իւրաքանչիւր յատկութեան ցուցիչ նշանը գէտի վրայ. մի առ մի նշանակելն թէեւ փոփաքելի էր, բայց հարկ կը լի-

նէր այն ժառանգակ, երկար յոգուածներու շարքերով գրաւել պարբերաբար Արշալոյսի էջերը, եւ դասական ձեռքով մ'ընել գիտագիտութեան. որն որ մեր նպատակէն գուրս է, լոկ իբր գաղափարային ծանօթութիւն առ այժմ ներկայս կրնայ գոհացնել բաւական հետաքրքրութիւն:

Պէտք է գիտնալ նաեւ թէ՛ մարդկային կարողութիւնները եւ ընդունակութիւնները գուչակելու արուեստը մերայն գիտագիտութիւնը չէ. կան նաեւ Գանկարանութիւն. կազմակերպութիւն. (մարմնոյ զանազան անդամներու ձեւերէն գուչակում.) Ձեռնահմայութիւն, որոց վրայ վերջերս երկու նոր ձեւեր ալ աւելցան. Գրահմայութիւն եւ Կօչկանաւանութիւն, որոց մին ձրանասցին, իսկ միւսն Ամերիկայէն ծնունդ առին: Մին մարդու ձեռագրէ եւ ստորագրութեան ներքեւի գէտն, իսկ միւր կօչի ձեւէն եւ զայն մշակելու չափէն ու կերպէն կը գուչակէ բարոյական որպիսութիւնը՝ առանց մարդը տեսնելու...

Ուրիշ առթիւ այս մասերուն վրայ ալ համառօտ ծանօթութիւն կուտանք Արշալոյսի ընթերցողներուն:

Ուսուցիչ գիտագիտութեան  
Մ. Հիւսիս

ՆԱՄԱԿ ԱՍԻՈՒԹԷՆ

Ասիոյ 9 Յունիս  
Պատ. Տնօրէն  
«Արշալոյս» լրագրի  
ի Գահիրէ

Կը խնդրուի որ հաճեք անկիւն մը շնորհիւ հետեւեալ գրութեանս:

Նոր-Օրի անդրանիկ թիւը կարգացի յ'Աստուան. ուր գտնուած մի քանի ազգայիններու դիւան էի Լսարան-Ընթերցատունի նպատիւներու համար. Եւ երբ հոգ եւ այլուր անխնայողութեան առաջին եւ վերջին պատճառը բերանացի կը բացատրէի, Ընթերցատուն Գործ. Ժողովոյ անդամներէն Տիար Կ. Չօլաքեան եւ Յ. Բիւքեան հեղինական կերպով մը կը խնդային: Հիւնայ թող բարեհաճին հետեւեալ հարցմանս պատասխանել:

Ա. — Եղբայրս վերին գիւղերուն մէջ տարածուած ազգայինները՝ որոց ամենն ալ իրենց ընթերցասիրութեան ապացոյցը տուած են, տարակոյս կը յայտնէին մեր այս սեսակ հաւաքական ձեռնարկներու տեսողական չ'ըլլալուն. Լսարան-Ընթերցատուն ընկերութեան ալ քիչ օրէն քայքայուելու հաւանականութիւնն աչքի առջեւ ունենալով, չ'էին ուղիւ մասնակցիլ. ուրմն անոնց գուչակութիւնը ուղիւ էր եւ մասնակցելէ հրաժարելն ալ խելացութիւն, որովհետեւ անոր քայքայման ապացոյցներն ահա այսօրուրնէ իսկ կը տեսնուին:

Բ. — Լսարան-ընթերցատուն մը հաստատելու նպատակաւ գրաւոր խոստումի տակ հաւաքածո շատ կ'առն քիչ գուճարներն, ներկայի մէջ իր բուն նպատակէն տարբեր նպատակի մը յատկացուած եւ կորուսելու վտանգի մէջ ըլլալը տեսնելով՝ նուէր եւ բաժնեկիներու փոխան գէթ բարոյալէս հատուցում մը պահանջելու իրաւունքն ունին բաժանորդ եւ նուիրատուները. եթէ այս յայտնի իրաւունքը ունին, ո՞վ է պատասխանատուն:

Գ. — Սօհակ, տիար Լ. Գ. Ս. է ստացած 97, 50 դրչ. նուէրն, նուիրատուին գուցէ ո եւ է ակնածութեանց հաւար, յայտնի անունով չը հրատարակուելու կառքը, Գործ. Ժողովոյ քանիցս գրաւոր եւ բերանացի կրկնելու հակառակ, դարձեալ հրատարակուելն նուիրատուն չի՞ զգած ուրի եւ իմ այս առթիւ տարապարտուց անկէ մեղադրուելու ինչ բանի պէտք է վերադարձի:

Դ. — Կիրակայէ գանձածո բաժնեկիներէ զատ 15 դրչի. նուէրն ինչո՞ւ հաշուելիչոյն մէջ չէ նշանակուած, եւ նուիրատուն իրաւունք չ'ունի՞ մտաբերելու թէ՛ գուցէ եւ գեղծած ըլլալ զայն. մինչդեռ այդ գուճարը միւս գուճարին հետ ընկերութեան հաւաքիչ Պ. Խաչիկ Ալթունեանի եւ Տիար Կ. Չօլաքեանի յանձնած էի:

Կը խնդրուի Նոր-Օրի վարչութիւնէն, որ մի-

եւսոյն ատեն անշուշտ վարիչն է նաեւ յողաչըրջուած Լսարան-Ընթերցատուն ընկերութեան, որ նորութիւն մը եղաւ իր անակին մէջ, եւ հինը մոռցնելու նպատակաւ նոր ուղղաւորութիւն եւ արդարութիւն կը խօստանայ նոր նուիրատուներ ձեռք անցել յարողոր նախար, որ բարեհաճի բացատրութիւններ տալ ներկայ խնդրոց մասին:

ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՌ Ս. ԳԱՐՍԵԼԻԱՆԵԱՆ

Բ. Ատենապետ. նախորդ դիւանի Բարեգործական Ընկերութեան հայոց ի Գահիրէ

Յունիս 8 ին ստացայ ձեր եւ ատենադպրի 6 Յունիս թուակիրը:

Վարչական անհատներու անվայել լեզուաւ գրուած ձեր նամակին քանի մը մասերուն վրայ իմ գիտողութիւններս հրապարակաւ պիտի ընեմ, որպէսզի յետ այսու սխալներ չի գործուին վարչական գործոց մէջ:

Ձեր եւ ատենադպրի կողմէ ստորագրուած նամակին ամենէն վերի տողէն համբելով, 13 ըր, տողին մէջ «իմֆիլիթն նաւակներ usnruագրած էի» պարբերութիւնը գործածած էք:

Ինչ կը նշանակէ այդ. փոփաքելի եւ միանգամայն հարկ է որ հրապարակաւ տաք պէտք եղած բացատրութիւնը:

Այս նամակի եւ Բարեգ. Ընկերութեան մէջ տեղի ունեցած այլ եւ այլ էմքրիկներու մասին ուրիշ առթիւ. առ այժմ պարտաւորութիւն կը գնեմ ձեր վրայ, որպէս զի ձեր նամակի պարունակութիւնները արդարացի էք:

Եթէ մինչեւ ութը օր ձեր կողմէ չի գործադրուի այս, օրինաւոր միջոցներով պիտի առիպեմ ձեզ առ այն, որպէսզի յետ այսու կարողալէ եւ համարալէ վերջ ո եւ է ստորագրութիւն գնէք, որով կարելի ըլլայ լուրջ մէկը համարել ձեզ, ձեր բոլոր հանրային ձեռնարկներուն մէջ՝ երբ պարագաները ձեզի նպատաւոր ըլլայ հանրային գործոց միջամտելու:

Գահիրէ 12 Յունիս 1900

Ա. Մ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ դիչեր Աթապա-էլ-Խատրայի հրապարակին վրայ գտնուած խանութէ մը կրակ առաւ. հրչեջները անմիջապէս հրդեհին վայրը հասան եւ կրակը մարեցին:

Քննութենէ մը վերջ՝ հաստատուեցաւ որ կրակը կանխամտածութեամբ ձգուած էր, որովհետեւ քարուղով թաթախուած քուրջեր գտան եւ մանաւանդ. պատերն ալ միւսնոյն հեղուկով օծուած էին:

Խանութին տէրը փախած էր. սպասաւորները ձերբակալուեցան եւ քննութիւնը կը շարունակուի:

Խոհարար ԱՌ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ. — Տէրի-թեյեկրաւ Պոլսոյ թղթակիցը հետեւեալ տեղեկութիւնները հազորդած է իւր թերթին:

Շէմս - էլ - Իսլամ ( Իսլամութեան ա-  
րևը ) անուան տակ գաղտնի ընկերութիւն  
մը կազմուած է, որուն կեդրոնն է Եգիպ-  
տոս. Այս ընկերութիւնը ամբողջ իսլամ  
աշխարհին մէջ յեղափոխութիւն մը յառաջ  
պիտի բերէ: Ամբողջ իսլամ հասարակու-  
թեան կրօնական պետերը և իւրեմաները  
մասնակցած են այդ ընկերութեան: Պոլսոյ  
մէջ ալ ճիւղ մ'ունի: Նպատակն է Սուլ-  
թանին հոգեւոր իշխանութիւնը բաժնել,  
խալիֆա մը անուանել որ ամբողջ իսլամնե-  
րուն պետը ըլլայ, Սուլթանին միմիայն  
թուքիոյ գահը ձգելով: Այս կերպով նոր  
խալիֆան կատարելապէս անկախ պիտի  
ըլլայ ինչպէս Պապը. իսլամ կրօնքին հա-  
մաձայն, խալիֆայի փոփոխութեանց մէջ  
Շէյխ-իւլ-իսլամին ֆէթվան կարևոր է.  
Շէմս - էլ - Իսլամը այդ ֆէթվան ունի, զոր  
նախորդ և հիմայ վախճանեալ չէյի-իւլ-  
իսլամ մը տուած է:

Սուլթանը ամեն ջանք ի գործ դրած է  
այս ֆէթվան ձեռք անցնելու համար, որ  
չատ մեծ կարևորութիւն ունի սրովհետեւ  
խալիֆայութիւնը կորսնցնելով, պիտի կոր-  
սնանք նաև իւր իշխանութիւնը ամբողջ  
իսլամներուն վրայէն:

Անկախ խալիֆայ մը աշխարհիս իսլամ-  
ները պիտի միացնէ և կարևոր տարր մը  
պիտի ըլլայ արևելքի վերաբերեալ ամ-  
բողջ խնդիրներու մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Անգլիական աղբիւրէ քաղուած տեղե-  
կութեանց նայելով. Ալպանիոյ ամբողջ  
ժողովուրդը զէնքերը ձեռք առած է. շատ  
լուրջ շարժման մը երկիւզը կայ: Բրիտանի-  
եայ և իսլամ Ալպանիացիներու մէջ տեղ  
քաղաքային պատերազմ մը անխուսափելի  
կը թուի:

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՆՈՒԷՐԸ.—Արքունի հա-  
սոյթից վարչութեան նախարարին ներկա-  
յացուցելը, Պէհմէթ Պէյ, երկու հիւսիս գոր-  
ծաւորներու հետ թուլոն հասած է:

Պէհմէթ Պէյ իր հետն ունի սքանչելի  
նուէր մը, զոր Սուլթանը երկու տարի ա-  
ռաջ Ռուսիոյ Չարին խօստացած էր հետեւ-  
եալ պարագայներուն տակ: Երիտասարդ  
Չարը իր Սքանչաւոր զբօսանաւով Պոլիս կը  
գտնուէր: Սուլթանը նաևուն մէջ Չարին  
այցելած պահուն ըսած է, «Այս նաևուն իր  
վեհապետին յարմար գորգ մը պէտք է,  
Ձեզի թրքական գորգագործութեան հրա-  
շալիքներէն մին պիտի նուիրեմ. միայն  
թէ համբերեցէք, այս գործը երեք տարի-  
էն կրնայ աւարտիլ»:

Գորգը տարի մը առաջ լինցած է եզեր  
և զայն զբօսանաւին մէջ տեղաւորելու հա-  
մար է որ Պէհմէթ պէյ թուլոն կ'երթայ,  
ուր քանի մը ամիտէ ի վեր նաւը նորագու-  
թեան մէջ է:

Գորգը 300 քիլօ կը կշռէ և արժէքը  
100,000 ֆրանկը կ'անցի:

Պոլսոյ մօտ Ենիփէ ըսուած տեղւոյ  
մէջ պատրաստուած է Չարին նուիրուած  
հռչակաւոր գոնգը:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն ԵՐ

Լոնտրա 8 Յունիս . — Նախագահ  
Քրիստիան Մաչատո-Տօրֆի հետ ունեցած առ-  
տակցութեանը մէջ յայտարարած է թէ՛  
ցմահ պիտի կռուի:

Թիէն-Չին 8 Յունիս. — Չինական պաշ-  
տօնական յայտարարութեանց համաձայն,  
4,000 Պօ.քսրըներ Եանկ-Յունի և Լօֆա ի  
մէջ շրջապատած են Չինական կանոնա-  
ւոր զօրքերը:

Պատերազմը դեռ մինչեւ երեկ իրի-  
կուն կը շարունակուէր:

Չինացի պաշտօնատարներու յայտարա-  
րութեանց նայելով, 500 Պօ.քսրըներ սպան-  
նուած են:

Իրիտանական 75 նաւային հետեակա-  
զօրք Փէքին երթալու արտօնութիւն ստա-  
նալու, համար կայարանին մէջ կ'սպասեն:  
Չինական իշխանութիւնք գժուարութիւն-  
ներ կը յարուցանեն:

Փէքին 8 Յունիս. — Թիէն-Չինի մօտ  
Պօ.քսրըներու և Չինացի զօրաց միջև պա-  
տերազմը կը մղուի:

Լոնտրա 9 Յունիս. — 25 հատ պատե-  
րազմանաւեր Թա-Թու հաւաքուած և 900  
հողի ցամաք ելած են. Անգլիական «Կօլ-  
եաթ» զբահաւորը ձիապալթարէն Չինաս-  
տան մեկնած է:

Լոնտրա 9 Յունիս . — Լէնկանէքէն  
գարձող Պէօր գունդերը պայմանաւոր հաշ-  
տութիւն պահանջած են:

Երկու հազար Պօէրներ Բրուէլթատի  
հիւսիսային կողմէն երկաթուղոյ գծերը  
կտրած են:

Ս. Բէթէրսպուրկ 9 Յունիս. — Ռու-  
սիա որոշեց ամիջապէս զինուորական գոր-  
ծողութեանց սկսիլ, Չինու մէջ օտարա-  
կաններու դէմ եղած յարձակումը արգելե-  
լու համար, բայց առանց զանց ընելու մեծ  
տէրութեանց հաւանութիւնը առնելու. սու-  
վորական ձևակերպութիւնները:

Լոնտրա 10 Յունիս. — Զօրավար Պուլ-  
լըրի հեռագիրները կը ծանուցանեն Պօէր-  
ներուն գէպի հիւսիս նահանջելը, բայց  
պայմանաւոր հաշտութեան վրայ ընաւ  
չ'իսօսիլ:

Թիէն-Չին 10 Յունիս. — Փէքին տա-  
նող երկաթուղոյ գծէն շատ մը մղուններ  
կատարելապէս քանդուած են:

Փէքինի վիճակը մեծ մտահոգութիւն  
կը պատճառէ:

Թիէն-Չին 10 Յունիս. — Հազար հինգ  
հարիւր Եւրոպացի զօրքեր Փէքին մեկնե-  
ցան:

Վանտէրստօրֆ 11 Յունիս. — 250 Պօ-  
էրներ Զօրավար Հիւնգըրի անձնատուր ե-  
ղած և մնացեալները նոյնը ընել խօս-  
տացած են:

Ս. Բէթէրսպուրկ 11 Յունիս. — Կը  
զեկուցուի թէ Տէրութեանց մէջ եղած  
կարգազրուութեամբ մը Բորթ-Արթիւրի  
Ռուսական զօրադուինքերէն 6,000 հողի  
շարժուն վիճակի մէջ գրուած են. ի հարկին  
Փէքին կամ Թիէն-Չին մեկնելու համար:

Լոնտրա 12 Յունիս. — Հազար հինգ  
հարիւր Պօէրներ հնազանդութիւն յայտնած  
են զօրավար Պրապանի:

Հ Ա Բ Ա Ք Ա Մ Ո Յ

ՀԱՅՈՑ ԺԱՂԱՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

Տիար Լեւոն Եղիազարեանց, Բարիցի  
մէջ հրատարակած սոյն օգտակար և կա-  
րևոր հրատարակութեան առաջին տետրն  
զրկած է մեզ:

Փրանսացի և Ռուս հեղինակաւոր ե-  
րածիչներու օժանդակութեամբ և աջակ-  
ցութեամբ հրատարակ ելած սոյն հրատա-  
րակութիւնն, քանի մը տեսակէտներով օգ-  
տակար կը գտնենք մեզ համար և արգարե  
կարծէ որ մասնաւորապէս խօսինք այս  
մասին:

Առ այժմ բաժանորդ գրուիլ փափա-  
քողներն կրնան գիմել «Արշալոյս» Տպա-  
րանն:

Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք

—Լ'արմէնի մէջ հետեւեալները կը  
կարդանք:  
Էթեօն ի մայիս 15 թուոյն մէջ կը  
գրեն:

—Փրանսական Հանրապետութեան նա-  
խագահ Լուի-Պէյի Սուլթանին շնորհներուն  
արժանանալէն ի վեր, Կ. Պոլսոյ Փրանսական  
իշխանութիւնք Մեծ Մարտապալեհի պա-  
լատին մասնաճիւղերը դարձած են:

Այսպէս, Կ. Պոլսոյ Փրանսական նամա-  
կատունը, մասնաւորաց զրկուած ըլլոր յե-  
զափոխական թերթերը՝ ու նոյն իսկ ապա-  
հովազրեալները, ետ կը դարձնէ:

Փրանսական Մամուլը, փրանսան ա-  
մեն քաղաքակրթեալ մարդու երկրորդ  
հայրենիք նկատող աւանդութեանց պահա-  
պանը, պիտի գիտնայ անշուշտ չափը ճանչ-  
ցնել այն ողորմելի մարդոց, որոնք այնչափ  
գեղեցիկ անուն մը կ'անպատուեն:

—Պ. Էտկար Շահին՝ երրորդ կարգի  
ոսկիէ շքանշան մը ստացած է 1900 ի Սա-  
լօնին մէջ ցուցադրած պատկերներուն  
համար. մեր անկեղծ շնորհաւորութիւնները  
անձանօթ՝ բայց տաղանդաւոր հայ արուես-  
տագիտին:

—Երիտասարդ թուրքերու պարագլու-  
խը համարուած, Իսմայիլ Բէմալ պէյ, որ  
Սուլթանին կողմէ Տրիպոլսոյ կուսակալ ան-  
ուանուած էր, Եւրոպա փախել է:

—Պ. Փանոս Թէրլէմէզեան, ժուլիան  
Ակադէմիայէն գծագրութեան մրցումի ա-  
ռաջին մրցանակն ստացած է:

Իր գործը որ կը ներկայացնէ երի-  
տասարդ ազլիկ մը, թուլուլի սկադէմիան  
զրկուած է, ուր փարիզի նման լաւ գնա-  
հատուած է:

Պ. Թէրլէմէզեան Վանցի է, և ժու-  
լիան սկադէմիային առաջին աշակերտն է  
որ այսպիսի յաջողութիւն մը կ'ունենայ:

—Ոստիկանութեան նախարար Շէ-  
ֆիք Պէյի որդին, իր ազատական գաղա-  
փաքներուն համար ինքզինքը Պոլսոյ մէջ  
ապահով չ'զգալով, Փարիզ ապաստանած է:

Բազուցի մարզապետը ազգային մը Պ.  
Ենովք Պուտաղեան վախճանելով իր կարօտ  
ազգակամներուն 440,000 ըուպլի կտակած  
է. 560,000 ըուպլի ալ տարբեր բարեգոր-  
ծական հաստատութեանց և գործոց յատկա-  
ցուցած է որ իր հայրենակիցները, Հայ,  
Ռուս, Վրացի և Թուրք պիտի օգտուին անկէ:

—Սքանչաւոր կը տեղեկանայ թէ՛ Սուլ-  
թանը Օրմանեան պատրիարքի երեք ա-

առջարկութիւնները ընդունած է . (որ ունիցի ախորժակը) ծիծաղեցի, ծիծաղեցի .) Ա. Սիսի կաթողիկոսին ազատ ընտրութիւնը . Բ. Կաթողիկոսի չեղող հայերուն ազատ երթիւնը . Գ. Կարոս հայերուն յետամնաց զինուորական սրբոց չհարհամար . . .

Օրվանեան Պատրիարքի, հայ ժողովուրդին քթին ինդալու այս վերջին արարուածը՝ չ'կարծուիր որ իր նախորդներուն նման յաջող կերպով անցնի:

—Պ. Կարապետ Գալֆայեան, կը գրէ Լ'Արմենի իր Յունիս 1 ի թուոյն մէջ. երեկ (31) Ապրիլ, շքեղ նուագահաղէս մը տուած է, անձնուէր ակադեմիքեամբ Տիկ. Ա. Արսէլի Օր. Ժ. Կրէի, Մունէ-Սիւլիի, Թ. Մունէի Տպրինիի, Հարբէի, Տամարի և Ժիւրտի-էօրի «Համբէր» էն կտորներ խաղացած է:

Մանրամասնութիւնը, կ'ըսէ «Լ'Արմենի» ին Պատ, Տնօրէնը, մեր յաջորդ թուով:

Մեծ յոյս ունինք թէ՛ մեր այս անգամուան կարգալիքներն չ'պիտի հակասեն ասկէ առաջ «Անահիտ» ի գրածներն, որովհետեւ մեծ վստահութեան արժանացած է Տիար Մ. Չերազի ուղղամտութիւնն, իբր գըրագէտ. Ազգային գործիչ և լուրջ պաշտպան ազգային Ս. դասին և աղիւ զգացմանց:

**ՀԵԼՎԱՆԻ ՎԻՍԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ**  
ԿԻՐԱԿԻ 10 ՅՈՒՆԻՍ 1900

5055	2518	1116	495	408	396	1603
9326	4801	1461	7303	6929	533	3161
65	3187	6812	7649	8253	2858	5244
7266	5634	8215	3842	9089	2255	

**Գ Ա Ֆ Է Մ Օ Ք Ա**

Տիգրան Կոտանեան պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր Փաղար-Մրուրի խանութին մէջ պատրաստել Սէմեկի սուրճին ամենաբնորոք և անխարդախ տեսակէն իրեն դիմող յաճախորդներ օրան 16 զրջ ուղջի հաշով, զուտ քաճէ պիտի կրնան գնել. կը լուրջ մէջ ալ ուղղամտութիւն գտնելով:

**ՆՈՐԱԹԻՒՆ ՄԵ**

Մինչև դարձ սովորութիւն չէ եղած կամ քիչ պատահած է, որ հայ թերթերու վարչութիւնը մտածած ըլլան հաւաքածոյներու վրայ:

Ստէպէկ պատահի որ այս ինչ կամ այն ինչ թիւը կուզուի բաժանորդի մը կամ հաւաքածոյ մը ունենալ ցանկացողին կողմէ և գրեթէ գտնել անկարելի կը ըլլայ:

Մենք «Արշալոյս» ի հրատարակման առաջին օրէն, մեր սպառուսին քանակը ինկատի ունենալով, քանի մը թիւեր մասնաւորապէս հաւաքածոյի համար աւելի սպաղրել տուած և առաջին վեցամսեայ կազմել տուած ենք:

Ուստի, ամեն անոնք որ կը փափաքին «Արշալոյս» ի առաջին վեցամսեայ կազմուած ունենալ, կ'ընան դիմել թերթին ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ:

Լաթկազմին համար 10 Քրանքի գումարով զրկելով մեզ:

Դարձեալ արտասահմանի ո'ւն է թերթի բաժանորդ գրուել փափաքողներէն անոնք որ գիւրութիւնը չ'ունին անոնց խմբագրութեանց հետ յարաբերութեան մանելու: կ'ընան մեզի դիմել:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

**ՆՈՐԱԿՈՋՄ**  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ  
«ԱՐՇԱԼՈՅՍԻ»  
ՀԻՄՆԵԱՆ 1 ՄԱՅԻՍ 1900

**ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԳԻ ՍԿԻՋԲԸ**

Օսկանիյի դեղատանին դիւնացի փողոցին մէջ.

Տպարանը բաց պիտի ըլլայ ամէն օր, առաւտորեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մտքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցեխարտեր, Երջարտեսականներ, Գիտեր, Հրատարակութիւններ, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ վաճառահանական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտահանութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆՈՒԿ ԵՆ:

**ԿՈՊԵՌՊԵՆԼԵԱՆ**  
ԵՒ ԸՆԿԵՐ.

**ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁԱՏՈՒՆ**

Տաներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամէն ճիւղերը լաւ մշակած և փորձառութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապուլլահ եղբարց տան, ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքի մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Եօզպիլիյէ Եստիա Գաւառի Օթիլ ԵՒ ԵՒՄՍԻ Տիշա գիւմաց թիւ 3 արարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և դուրսը կուտինք ի հարկին:

Արանսիան ընական մեծութեամբ: Կենդանագիրներ ամերիկեան մեքենայով որոնք երբէք չ'են աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամէն մեծութեամբ ընական գոյներով միւլտիքոլոր:

Իւզաներկ և ջրաներկ պատկերներ և ըն: Լուսանկարի և պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի յարող, ճիշտ յարգումս և ըն:

Իրեն դիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

**Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Յ**  
ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԱՇԻԱՐԶԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընդունութեան մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ Իրահիրէ

**ՏՈՐՔ Ա. Յ. ԲԵՐԵՍՈՒԹԵԱՆ**  
Ի Եստիա Գոթ-Պէյ, թիւ 20

Իր ՉՐԻ խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրախ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. Ե. ) 9 էն 11 որոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն դիմել ուղղակի պատահականներու: 5—8

**ՏԻՐԱՆ ՀԻՐՄԻԻԶԵԱՆ**

Եստիա Մօսկուէս Այիվիպորիս դեղատանին քով:

Իրեն դիմող յաճախորդաց, տոկուն ապրանքներով և նորաձեւութեան համաձայն, ձեւաւոր հագուստներ պատրաստել կը խոստանայ խիստ չափաւոր գներով:

Փորձի համար անգամ մը միայն հոն գիւնը, սրտի գոհունակութեամբ պիտի մեկնի և ճաշակաւոր ու ձեւաւոր զգեստ ունենալու համար՝ դարձեալ Հիւրմուրեղանը պիտի փնտռէ: 7—8

**ԳՐԵՑ ՈՒՅՈՂ ՆՍԵՐՈՒՆ**

Գահիրէի և չըվակայից գրասէր Հայ հասարակութեան դիւրութիւն մը տալու մտօք կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Իստական, Իպրոցական, Գիտական, Իրական Արուեստական, Բանասիրական, Վիպական եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիէննա, կարելի է գիւրամատչելի պայմաններով ձեռք բերել՝ դիմելով Տիար Կ. Նաւասարդեանի, Գալստեան վարժարան Հայոց ի Գահիրէ:

**ՏՕՔԹ ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ**

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ  
Ապրիլ Եստիա Գոթի թիւ 55

Կը պատրաստէ ամէն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ սկուաներ:

Կը գագրեցնէ վայրկենապէս սկուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօսով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած սկուաններուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի գարմանում: ամեն օր կէսօրէ ետք ժամը 5—5:

Ա.Լ.ՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ ԳԼԽԱՆՈՐ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ յՄԼԵՔԱՆԳՐԻԱՆ